Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոտայքի մարզի Առինջ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

21 հուլիսի 2012թ գ.Առինջ

2012թվականի հուլիսիի 21-ին տեղի է ունեցել Առինջ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ

7. Նելլի Մխիթարյան
8. Սամվել Ծառուկյան
9. Ջուլետտա Ալեքսանյան
10. Գեղամ Մանուկյան
11. Առաքել Խաչատրյան
12. Հայկ Թադևոսյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից

4. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ս.Մեսրոպյան
5. Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Բարսեղյան
6. Համայնքի ղեկավարի աշխատակազմի

գլխավոր մասնագետ՝ Ն.Հայրապետյան
Ն.Համբարձումյան
Գոռ Սարգսյան

Համայնքի 457 բնակիչներ՝

3. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարած աշխանքների հանրային իրազեկման մասին
4. Ընթացիկ կամ այլ ծախսեր

Լսեցին Առինջ համայնքի ղեկավար Գ.Սարգսյանին

Հաշվետու ժամանակահատվածում ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով Առինջ համայնքի աշխատակազմը որոշ աշխատանքներ է կատարել համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ուղղությամբ:

Իմ ամենօրյա հսկողության տակ է համայնքի ֆինանսական գործունեությունը:

2011թվականի դրությամբ բյուջեն կատարվել է109.6%-ով, ֆինանսական պարտավորություններ համայնքը չունի:
2011թվականի 3-րդ եռամսյակում կատարվել է ասֆալտապատման աշխատանքներ, որի ընթացքում վերանորոգվել է և ասֆալտապատվել է 1830քառ.մետր տարածք:
Գյուղի մեծ մասը ունի արտաքին լուսավորություն,այդ աշխատանքները շարունակվում են գազաֆիկացման աշխատանքներ են իրականացվում նոր կառուցվող թաղամասերում 2011թվականի 2-րդ եռամսյակի դրությամբ:Գազաֆիկացվել է շուրջ 32 տուն:
Համայնքի փողոցների և տների համարակալման աշխատանքերը շարունակվում են:

Համայնքի քաղաքաշինության աշխատանքները գտնվում են բավարար հիմքերի վրա, հսկողություն է սահմանվում անօրինական շինարարության և հող օգտագործման կանոնները խախտողների նկատմամբ:
Համայնքի աղբահանության աշխատանքները նույնպես բավարար հիմքերի վրա են ,բոլոր փողոցներում տեղադրված են աղբարկղներ գործում է երկու աղբատար մեքենաներ ժամանակին կատարվում է փողոցների աղբահանությունը:
Աշխատանքներ են կատարվում համայնքում գործող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների հսկողության ուղղությամբ: Պարբերաբար կատարվում են ստուգումներ, տրամադրվում են ոգելից խմիչի և ծխախոտի վաճառքի թույլտվություններ
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի հովանավորությամբ գործում է Ռոզա Ծառուկյանի անվան մանկապարտեզը, այն գործում է անվճար սոցիալապես անապահով երեխաների համար,համայնքն ունի նաև մշակույթի տունը, որտեղ նույպես Գագիկ Ծառուկյանի հովանավորությամբ գյուղի շուրջ 270 երեխաներ անվճար հաճախում են պարի, կառատեի, բռնցքամարտի և նկարչության խմբակներ, մշակույթի տան 2-րդ հարկում գտնվում է գրադարանը, որն ունի տաս հազար կտոր գրականություն շուրջ 630 ընթերցողներ: Ինչպես մշակույթի տանը այնպես էլ գրադարում կազմակերպվում է միջոցառումներ , համերգներ, հանդիպման երեկոններ:Հաջողություններ կան բռնցքամարտի և կառատեի ասպարեզում,խմբակները մասնակցում են միջհանրապետական մրցումների:
Իմ ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքի զոհված ազատամատիկների ընտանիքների սոցիալ տնտեսական պայմանների բարելավման աշխատանքները:
Կարիքավոր և ծնողազուրկ ընտանիքի երեխաներին փոխացվել է ուսման վարձը, անապահով ընտանիքներին բուժման , բնակարանների ջեռուցման նպատակով տրամադրվել է ֆինանսական օգնություն:Բավարար հիմքերի վրա է ծեր, տարեց մարդկանց, հաշմանդամների, պատերազմի մասնակիցների հագիստը և առօրյան հետաքրքիր կազմակեպելու աշխատանքերը: Գործում է վետերանների ակումբը, որտեղ նշված մարդիկ անց են կացնում իրենց հանգստը, կազմակերպում են միջոցառումներ, էքսկուրսիա, նշում հիշատակի և տոնական օրերը:Շուրջ 360ընտանիքի տրամադրվում է ամենամսյա ֆինանսական օգնություն՝ 100000(տաս հազար)-անկան դրամ:
Բարելավվել է համայնքի ավագանու գործունեությունը,ավագանու նիստերը գումարվում են ավագանու կանոնակարգի համաձայն: Բարձր մակարդակով է կազմակերպվում համայնքի բնակիչների ընդունելությունը համայնքի ղեկավարի կողմից, ժամանակին և պատշաճ մակարդակով ընթացք է տրվում նրանց դիմում բողոքների:
Վարվում են համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները :Համայնքի աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի բյուջեի , համայնքի ավագանու համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակյանությունը:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ

4. Համայնքի բնակիչ՝ Վ.Հովհաննիսյանը համայնքի ղեկավարի և ավագանու աշխատանքները գնահատեց դրական: Նա նշեց, որ համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում զոհված , հաշմանդամ, ծնողազուրկ ընտանիքների սոցիալ տնտեսական պայմանների բարելավման ուղղությամբ: Լուրջ ուշադրության է դարձվում նրանց բուժ-սպասարկման բարելավմանը՝ անվճար բուժ-օգնություն առաջին բուժ-օգնության դեղորայք:

5. Համայնքի բնակիչ Բորիս Մելիքսեթյանը նշեց, որ համայնքի ղեկավարը լուրջ ուշադրություն է դարձնում գյուղի սանիտարական վիճակի, շրջակա միջավայրի մաքրության և աղբահանության աշխատանքներին: Գյուղում կազմակերպվում են շաբաթօրյակներ,ծառատունկ, ծաղիկների տնկում:
6. Համայնքի ուսանողությունը նշեց, որ գյուղում կազմակերպվում են միջոցառուներ երիտասարդների հանգիստը հետաքրքիր և բովանդակալից անցկացնելու ուէէությամբ, կազմակերպվում են բակային խաղեր, մրցույթներ սակայն նրանք դժգոհում են տրանսպորտի աշխատանքից, ուսման ժամանակահատվածում տրանսպորտը աշխատում է ուշացումներով: Ուստի խնդրվում է ուշադրություն դարձնել այդ խնդրի լուծմանը:
7.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1.Գազաֆիկացնել նոր կառուցվող Դուրյան թաղամասը

2.Անցկացնել Խ.Աբովյան թաղամասի փողոցների լուսավորությունը

3.Տրանսպորտի աշխատանքի բարելավում

4.Լուծել Վ.Տերյան թաղամասի կողույու անցկացման հարցը

ՈՐՈՇՎԵՑ

1/ Համայնքի ղեկավարի հաշվետվությունը ընդունել ի գիտություն

2/ Առաջիկայում նորակառույց թաղամասերում կատարել ասֆալտապատման աշխատանքներ

3/ Անցկացնել փողոցային լուսավորություն

4/ Ընթացիկ կամ այլ ծախսեր

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Գ.Սարգսյանի հաղորդումները համայնքի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների մասին, նա նշեց,,որ բավարար հիմքերի վրա է գտնվում աշխատակազմի աշխատանքային ներքին կարգապահությունը:

Աշխատակազմի ամենօրյա աշխատանքն է համարվում հարկերի հավաքագրումը, քաղաքացիների ընդունելությունների և գյուղապետարանի գործավարության կազմակերպումը:

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքի տարածքի սանիտարական մաքրության պահպանման աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումները ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ